Սրբազան Քահանայապետ,

Խոր ցավով լսեցի գույժը ճակատագրական պատահարի, որը խլեց Ձեր ընտանիքից երեք անմեղ հոգիներ: Սիրեցյալ Քահանայապետ, ես ևս իմ թշվառ աղոթքներով և Սբ. Պատարագ մատուցելով գալիս եմ միանալու նրանց հոգիների համար և Ձեր զարմիկի ապաքինման համար առ Աստված բարձրացված աղոթքներին:

Իմ թեմի (Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կաթողիկեները) բոլոր հոգևորականները ևս միացան աղոթքներին և նույն դիտավորությամբ առաջիկա կիրակի Սբ. Պատարագներ կմատուցեն:

Սրբազան Քահանայապետ, առիթից օգտվելով՝ հայցում եմ Ձեր առաքելական օրհնությունը Հայաստանի Հայ Կաթողիկե Եկեղեցու առաքելության համար:

*Ձերդ խոնարհ ծառա՝*

*Ռաֆայել Արքեպիսկոպոս Մինասյան*

Armenian Catholic Ordinariate – 82 Aterbeguian Street – 3104 – GYUMRI – ARMENIA
E-mail: stgregoryacc@gmail.com ; Phone: +374-312-52115, Cell. +374-98-331-707